## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-26/30

## 25.06.2026Թ. ԿՆՔՎԱԾ ԹԻՎ ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-26/30 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «13» «07» 2026թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Հասմիկ Հակոբյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ԷՍ ԷՍ ԷՅՁ ԷՅՁ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մայտա Գազանճեանի, (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, հիմք ընդունելով 25.06.2026թ կնքված N ՀՀԿԳՄՍՆԳՀԱՊՁԲ-26/30 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.6 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Ելնելով անհրաժեշտությունից, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել փոփոխություն՝ Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման վերջնաժամկետը երկարաձգելով 20 օրացուցային օրով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4. Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Գ Ն Ո Ր Դ**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ՝ ըստ կազմակերպությունների
հաշվեհամարները կտրամադրվեն ապրանքների
մատակարարման ժամանակ
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար

---------------------------- Հ. Հակոբյան
(ստորագրություն)

Կ.Տ.

**Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ**

«ԷՍ ԷՍ ԷՅՁ ԷՅՁ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղամաս, 38 շենք, 53 տարածք

ՀՀ՝ 2050422344061001
ՀՎՀՀ՝ 00218923

Տնօրեն՝

---------------------------- Մ. Գազանճեան
(ստորագրություն)

Կ.Տ